



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

<<Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի

Օգնականների դասավանդման հմտությունների

Ձարգացման ապահովում>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝ ՆԶՊ

Թեմա՝ Ռազմական տեղագրություն

Վերապատրաստող, մենթոր՝ Նվարդ Յովհաննիսյան

Ուսուցիչ՝ Եղիազար Հարությունյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն-----	3
Ռազմական տեղագրության նյութեր-----	4-13
Եզրակացություն-----	14
Օգտագործված գրականության ցանկ-----	15

Ներածություն

Ռազմական տեղագրություն, [ռազմագիտության բաժիններից մեկը](#), որը ուսումնասիրում է մարտական գործողությունների վարման նպատակով ուսումնասիրում է տեղանքը, [հորիզոնի](#) կողմերը, մարտական գործունեության ապահովման համար դաշտային չափումների, հրամանատարների՝ աշխատանքային [քարտեզների](#) վարման և գրաֆիկական մարտական փաստաթղթերի, քարտեզների մշակման եղանակներն ու միջոցները:

Ռազմական տեղագրության առանձնակահատկություններ

Ռազմական տեղագրության հատուկ բաժինը ուսումնասիրում է տեղանքի կողմերը, պատերազմական դաշտի գնահատումը և [գիևված ուժերի](#) անցնելիք ճանապարհահատվածի աշխարհագրական դիրքի և [կլիմայական](#) պայմանների գնահատումը:

Ի տարբերություն հասարակ քարտեզագրության, ռազմական տեղագրությունը կիրառվում է ոչ թե քաղաքացիության մեջ, այլ գիևված ուժերում: Այս ռազմական բաժինը ևս իր հերթին հիմնված է քարտեզագրության և [աշխարհագրության պատմության վրա](#):

Համեմատելով հասարակ ռեգիոնալ քարտեզագրության հետ, կարելի է արձանագրել շատ տարբերություններ: Ռազմական տեղագրության [քարտեզները](#) առավել լավ են նկարագրում տեղանքի [լեռնագրությունը](#):

Ռազմական տեղագրություն

Ռազմական տեղագրությունը համարվում է մարտական պատրաստության կարևորագույն առարկաներից, քանի որ միայն տեղանքի մարտավարական հատկանիշների և պատերազմական դաշտի ճիշտ գնահատմամբ ու օգտագործմամբ է հնարավոր դառնում արդյունավետ կազմա-կերպել ու վարել մարտական գործողությունները:

Ժամանակակից մարտում զինված ուժերի հաղթանակը մեծապես կախված է հենց ռազմական տեղագրության ուսումնասիրությունից, և զինծառայողները պետք է ոչ միայն տիրապետեն տեղանքին, այլև պետք է իմանան տեղանքի տարատեսակները, դրանց մարտավարական հատկանիշները, պետք է կարողանան ինքնուրույն կողմնորոշվել տեղանքում, կարողալ տեղագրական քարտեզը, որոշել հեռավորության սահմաններն ու գնահատել տեղանքը:

Տեղանքի ուսումնասիրումն ընդգրկում է նաև զինված ուժերի անցնելիք ճանապարհահատվածի աշխարհագրական դիրքի և կլիմայական պայմանների գնահատումը:

Ռազմական տեղագրությունը ուսումնասիրում է նաև մարտական գործունեության ապահովման համար դաշտային չափումների, հրամանատարների՝ աշխատանքային քարտեզների վարման և գրաֆիկական մարտական փաստաթղթերի, քարտեզների մշակման եղանակներն ու միջոցները:

Ռազմական տեղագրությունը հիմնված է քարտեզագրության և աշխարհագրության պատմության տվյալների վրա, բայց և այնպես, ի տարբերություն հասարակ քարտեզագրության, այն չի կիրառվում քաղաքացիության մեջ, այլ բացառապես զինված ուժերում:

Ռազմական տեղագրության ուսումնասիրությունը զինծառայողների մոտ զարգացնում է դիտողականությունը, ճշգրտությունը, դիտարկումների արդյունքների և տեղանքի մարտավարական հատկանիշների վերլուծման ու գնահատման ունակությունը:



Ռազմական տեղագրություն. տեղանքի տարատեսակներն ու դրանց մարտավարական հատկանիշները

Մարտական գործողություններից առաջ կատարվում է տեղանքի ուսումնասիրում: Դա կատարվում է երկու եղանակով՝ տեղագնումով եւ տեղագրական քարտեզի օգնությամբ: Տեղանքն ուսումնասիրելու եւ ճիշտ եզրակացություններ կատարելու համար պետք է լավ իմանալ տեղանքի տարատեսակների մարտավարական հատկանիշները:

Ցանկացած մարտական առաջադրանք կատարվում է երկրի մակերևույթի որոշակի տեղամասում՝ տեղանքում: Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է տեղանքի ռելիեֆ:

Տեղանքն ըստ ռելիեֆի բնույթի լինում է՝ հարթավայրային, բլրային և լեռնային:

Ըստ կտրտվածության աստիճանի՝ թույլ, միջին և խիստ կտրտված:

Ըստ բուսածածկույթի տեղանքները լինում են՝ անտառային, ճահճային, անապատային, տափաստանային, տունդրային, գյուղատնտեսական նշանակության:

Ըստ քողարկման և դիտարկման պայմանների տեղանքը կարող է լինել՝ բաց, կիսափակ և փակ:

Տեղանքի մարտավարական հատկանիշները

Մարտական գործողությունների արդյունավետ վարման համար կարևորագույն նշանակություն ունի ոչ միայն տեղանքի ուսումնասիրումը, այլև տեղանքի մարտավարական հատկանիշները:

Չովիտները համարվում են հրաշալի թաքստոց և լավագույնս պատսպարում են մարդկանց ու ռազմական տեխնիկան թշնամու դիտարկումներից ու կրակից, սակայն միևնույն ժամանակ խոչընդոտում են սեփական զորքերի տեղաշարժին:

Նույն կերպ՝ լեռնային տեղանքն դժվարամատչելի է ռազմական տեխնիկայի տեղաշարժման, դիտարկման, կողմնորոշման և կրակի վարման համար: Այդուհանդերձ, լեռնային տեղանքներում զորքերը կարողանում են ավելի ապահով տեղաշարժվել, աննկատ քողարկվել, հետևաբար այն առավել նպաստավոր է պաշտպանության համար:


Մարտական գործողությունների ժամանակ հարձակման և պաշտպանության համար առավել նպաստավոր է բլրային տեղանքը, որը ընդհանուր առմամբ, չի խոչընդոտում մարտական տեխնիկայի և տրանսպորտի տեղաշարժերը, նպաստում է քողարկմանը, դիտակետերի և կրակային դիրքերի ընտրմանը:

Կողմնորոշում տեղանքում առանց GPS

Արշավի յուրաքանչյուր մասնակցի անհրաժեշտ է տիրապետել ճիշտ կողմնորոշվելու հմտություններին, աստիճանաբար ձեռք բերել որոշակի փորձ այս ասպարեզում: Ձեզ ենք ներկայացնում այն միջոցները, որոնք կօգնեն կատարել ճիշտ կողմնորոշում տեղանքում առանց GPS : Այդպիսի միջոցներից են կողմնացույցը, ժամացույցը, ու անգամ բնությունն ինքն է մարդկանց հուշում՝ ինչպես գտնել ճիշտ ճանապարհը:

Արյն ու ժամացույցը՝ կողմնացույցի փոխարեն

Արևի և ժամացույցի «համագործակցությամբ» կարելի է ճշգրիտ կերպով որոշել հորիզոնի կողմերը: Անհրաժեշտ է միայն ժամացույցը պահել հորիզոնական դիրքով և պտտեցնել այնքան, մինչ ժամային սլաքն ուղղված լինի դեպի արևը, որից հետո պետք է տանել երևակայական գիծ ժամ-սլաքի և «1» թվի միջև: Նայելով տվյալ անկյանը հատող գծին, մենք կգտնենք հարավային կողմը:




Արևն ու ժամացույցը

Գիշերային լուսատուների դերը կողմնորոշման հարցում

Նման դեպքերում մեզ օգնության կարող են հասնել նաև գիշերային լուսատուները: Արդեն ուշ ժամերին՝ մթնելուն պես, երկրի կողմերը կարելի է որոշել բևեռային աստղի և լուսնի օգնությամբ: Երկնքում գտնելով յոթ աստղերից բաղկացած Մեծ Արջի համաստեղությունը՝ շերտփը վերջավորող երկու եզրային աստղերը միացնող գիծը մտովի երկարացնենք շերտփի լայն բացվածքի ուղղությամբ և այդ ուղիղ գիծը շարունակենք, հաշվելով երկու աստղերի միջև ընկած տարածությունը հինգ անգամ:

Կտենենք, որ երևակայական գիծը այդ կետում հանդիպում է մի պայծառ աստղի, որն էլ ամենափայլուն աստղն է տվյալ հատվածում: Բացի այս, Փոքր Արջի «բռնակի» վերջին աստղն է: Նրա միջոցով կարելի է որոշել հորիզոնի կողմերը: Եթե դեմքով կանգնենք դեպի հյուսիս՝ բևեռային աստղի աջ կողմը կլինի արևելք, ձախը՝ արևմուտք, ծոծրակի կողմը՝ հարավ:



Մեծ Արջի համաստեղությունը և Հյուսիսային աստղը

Տեղանքում եղած առարկաները՝ կողմնորոշիչներ

Բնության մեջ մեզ հանդիպող առարկաները ևս կարող են հեշտացնել մեր առջև դրված խնդիրը՝ ինչպես կատարել ճիշտ կողմնորոշում տեղանքում առանց GPS: ճիշտ է, այս մեթոդը քիչ կիրառելի է, ոչ այնքան հավաստի լինելու պատճառով, բայց կարելի է օգտվել նաև այս կողմնորոշիչներից: Դրանք հետևյալներն են՝

1. միայնակ ծառի հարավային կողմի ճյուղերն ավելի փարթամ են, քան հյուսիսային կողմինը
2. կտրված ծառի կոճղի վրա կարելի է որոշել հորիզոնի կողմերը. նրանց բների վրա երևացող տարեկան օղակները բնի հյուսիսային կողմում անպայման խիստ են լինում,

3. մամուռը և քարաքոսը աճում են ծառերի կեղևի ու քարերի հյուսիսային կողմերում՝ խուսափելով արևի ճառագայթներից
4. գարնանը ձյան շերտը շատ շուտ հալվում է՝ հարավային կողմում և սարալանջին առաջացնելով շերտավոր մասեր
5. հատապտուղները և մրգերը ավելի շատ հարավային կողմից են գունավորվում
6. մրջնանոցների թմբի երկար լանջը նայում է դեպի հարավ
7. եկեղեցիներով հեշտությամբ կարելի է կողմնորոշվել, իմանալով, որ խորանը կառուցված է լինում եկեղեցու արևելյան մասում, իսկ մուտքը՝ արևմտյան, որ արևի ժամացույցները սովորաբար գտնվում են եկեղեցու հարավային պատի վրա, իսկ եթե եկեղեցու գագաթին խաչ կա, ապա նրա թևերը ուղղված են արևելքից արևմուտք:



Տեղանքում եղած առարկաները՝ կողմնորոշիչներ

Կողմնորոշումը կողմնացույցով

Ինչ վերաբերում է կողմնորոշմանը կողմնացույցի միջոցով, ապա կարելի է ասել, որ այս գործիքն օգնում է ճշգրտորեն որոշել հորիզոնի կողմերը ցանկացած դիրքից: Գոյություն ունեն աշակերտական, ծովային, երկրաբանական, ռազմական մի շարք կողմնացույցեր: Մեծամասամբ բոլոր տեսակի կողմնացույցերն էլ կազմված են տուփից, թվատախտակից, նշանառության հարմարանքից, մագնիսական սլաքից, ասեղից և արգելակից:

Հորիզոնի կողմերը որոշելու համար կողմնացույցը պետք է պահել հորիզոնական վիճակում՝ ափի մեջ կամ հարթառարկայի վրա, և արգելակը բացելով, սպասել մինչև սլաքի շարժումը հանդարտվի: Ապա տուփը պետք է պտտել այնքան ժամանակ, մինչև սլաքի հյուսիսային ծայրը համընկնի հյուսիսի 360 աստիճան ցուցիչի հետ: Հյուսիսային կողմը գտնելուց հետո արդեն հեշտ է գտնել մյուս կողմերը: Կողմնացույցի անխափան աշխատանքը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. երեկոյան ժամերին մագնիսական սլաքը ավելի պայծառ երևալու համար անհրաժեշտ է 10-15 րոպե այն պահել ուժեղ լույսի տակ
2. ամպրոպների ժամանակ մագնիսականությամբ հարուստ լեռների վրա կողմնացույցը կաշխատի որոշակի խախտումներով, ինչը կարելի է նկատել Արագածի գագաթը բարձրանալիս
3. աշխատանքի պահին կողմնացույցը պետք է հեռու լինի մետաղյա իրերից և էլեկտրական բարձր լարման հոսանքի սյուներից
4. աշխատանքն ավարտելուն պես պետք է սեղմել կողմնացույցի արգելակը:



Կողմնորոշումը կողմնացույցով

Ազիմուտ

Տուրիստ-ճանապարհորդին անշուշտ պետք է ճիշտ պատկերացում կազմել իր շարժման ուղղության մասին: Շարժման ուղղությունը դեպի տվյալ առարկաները

կամ կողմնորոշիչները արտահայտվում է ազիմուտով: Ազիմուտ է կոչվում հորիզոնական հարթության վրա կազմված այն անկյունը, որը գտնվում է միջօրեականի և շարժման ուղղության միջև: Ազիմուտները չափվում են աստիճաններով. 0-360 աստիճան: 90 աստիճան անկյունը ցույց է տալիս արևելյան կողմը, 180 աստիճանը անկյունը՝ հարավայինը, 270 աստիճան անկյունը՝ արևմտյանը, 0 կամ 360 աստիճան անկյունը՝ հյուսիսայինը: Որևէ առարկայի ազիմուտը որոշելու համար պետք է դեմքով կանգնել դեպի տվյալ կողմնորոշիչը, որից հետո պետք է այնպես բռնել կողմնացույցը, որ սլաքի հյուսիսային ծայրը համընկնի թվատախտակի վրա դրված հյուսիսի ցուցիչի հետ: Չխախտելով կողմնորոշման հորիզոնական դիրքը՝ կողմնացույցը բարձրացնել մինչև աչքի բարձրությունը ու պտտել նրա նշանառության հարմարանքը այնքան, մինչև նշանառության ակոսից երևա ասեղը, որն էլ ուղղված է լինում դեպի կողմնորոշիչը: Ասեղի մոտ՝ թվատախտակի վրա կկարդաք տվյալ առարկայի անկյունը՝ ազիմուտը: Շարժման ընթացքում հարկավոր է կողմնացույցը պահել ձեռքում և ամեն 50-100 քայլից հետո ստուգել ուղղության ճշտությունը, որպեսզի տեսադաշտից չկորչի կողմնորոշված առարկան: Վատ տեսանելիության պայմաններում, խիտ անտառների դժվարանցանելի հատվածներում անհրաժեշտ է, որ մասնակիցներից մեկը ուղղորդի մնացածին, որպեսզի նրանց ընդունելով իբրև «կողմնորոշիչներ», հեշտ լինի միաժամանակ ստուգել շարժման ուղղությունը:


Կողմնորոշումը քարտեզի միջոցով

Վերջապես, ճանապարհորդի համար առաջնային նախապայման է կարողանալ օգտվել քարտեզից և կողմնորոշվել դրանով: Նա պետք է ունենա որոշակի գիտելիքներ, ծանոթ լինի պայմանանշաններին, որոշի մասշտաբները և ռելեֆի ձևերը: Այս գիտելիքները հնարավորություն կտան հեշտությամբ իրականացնել կողմնորոշում տեղանքում առանց GPS – ի:

Քարտեզը կարելի է կողմնորոշել՝

1. հորիզոնի կողմերով կամ երկնային լուսատուներով
2. տեղանքի առարկաներով
3. ռելեֆի բնորոշ գծերով
4. կողմնացույցով

Քարտեզը կարելի է կողմնորոշել նաև ըստ տեղանքի, այն է՝ քարտեզի հորիզոնական կողմերը բերել այնպիսի դիրքի, որ համընկնի տեղանքի համապատասխան ուղղությունների հետ, որին հետևում է գտնել արշավի մասնակիցների տեղը քարտեզի վրա՝ այնտեղ նշված առարկաների օգնությամբ: Մասնակցի տեղը գտնելուց հետո դժվար չէ այնուհետև օգտվել տեղագրական քարտեզից, գտնել ցանկացած կողմնորոշիչը, շարժվել համապատասխան ուղղությամբ:



Տեղանքը և նրա նշանակությունը մարտում: Սկզբում տալիս ենք աշակերտներին հասկացություն և այն մասին, որ տեղանքը դա երկրի մակերևույթի որոշակի տեղամաս է, որի վրա անցկացվելու են մարտական գործողությունները: Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է տեղանքի ռելիեֆ, իսկ նրա վրա տեղաբաշխված բոլոր առարկաները, որոնք ստեղծվել են մարդկանց կամ բնության կողմից, կոչվում են տեղանքի առարկաներ: Ռելիեֆը և տեղանքի առարկաները տեղանքի հիմնական տեղագրական տարրերն են: Տեղանքի տեղագրական տարրերը որոշում են նրա մարտավարական հատկությունները, քանի որ դրանք ազդում են մարտի /գործնական դասի/ կազմակերպման և անցկացման, մարտում մարտական տեխնիկայի օգտագործման, դիտարկման, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման պայմանների վրա: Տեղանքի մարտավարական և պաշտպանական հատկությունները ճիշտ և բազմակողմանի գնահատումը և դրանց հիմուտ օգտագործումը մարտական գործողություններում (գործնական) դասա

հաջողության հասնելու հիմնական պայմաններն են: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է կատարելագործել իր գիտելիքները տեղանքի մասին, մշակել դրանք գործնականում հմտորեն օգտագործելու ունակություն ունենալու նպատակով: Ռազմական գործողությունների իրականացումը եղանակի տարբեր պայմաններում, օրվա ցանկացած ժամին, տեղանքի բազմազան պայմաններում բարձր պահանջներ է առաջադրում զորքերին՝ տեղանքի ուսումնասիրման, գնահատման և օգտագործման առումով: Տեղանքի տեսակները և դրանց ազդեցությունը մարտի կազմակերպման և անցկացման վրա: Ըստ ռելիեֆի բնույթի տեղանքը լինում է

- հարթավայրային,
- բլրային
- լեռնային

իսկ ըստ հողաբուսական ծածկույթի բնույթի՝

- անտառային,
- ճահճային
- անապատատափաստանային

Ռելիեֆի և հողաբուսական ծածկույթի համադրումից առաջանում են տեղանքի լեռնաանտառային, անտառաճահճային և այլ տեսակներ: Հարթավայրային տեղանքը հարթ կամ սակավ բլրապատ տարածք է: Բլուրների լանջերի թեքությունը 1-2-ից ոչ ավել չէ: Հարթավայրային տեղանքը կարող է լինել բաց, եթե նրա վրա չկան տեղանքի առարկաներ, կամ փակ, եթե այդտեղ առկա են անտառներ, թփուտներ, բնակավայրեր: Գետերի, լճերի և ճահիճների մեծաքանակության դեպքում հարթավայրային տեղանքը կտրտված, մասնատված տեսք է ստանում: Եվ եթե այն քիչ է մասնատված, մատչելի է բոլոր ցամաքային զորատեսակների տեղաշարժերի և մարտական գործողությունների համար: Կավային, ավազակավային, կավաավազային և տորֆային տեղանքը բարձր խոնավության պայմաններում դժվարեցնում է տեղաշարժը, և դառնում է համարյա անանցանելի: Բլրոտ տեղանքն ունի բարձրությունների և իջվածքներ, որոնք չեն խոչընդոտում մարտական տեխնիկայի և տրանսպորտի բոլոր տեսակների տեղաշարժերին: Այստեղ գերակշռում են բլուրները, լեռնահովիտները, հազվադեպ՝ ձորակները: Բլուրների լանջերի թեքությունը չի գերազանցում 2-3-ից: Բլրային տեղանքը նպաստում է քողարկմանը, դիտարկման կետերի և կրակային դիրքերի ընտրությանը: Այն որոշակի պաշտպանական հատկություններ ունի միջուկային զենքի գործադրման դեպքում: Լեռնային տեղանքում գերակշռում են լեռները, լեռնաշղթաները, կիրճերը և լեռնահովիտները: Դրանց լանջերը, որպես կանոն, թեք են և ժայռոտ: Ճանապարհների բացակայության դեպքում այստեղ դժվարանում է ինչպես երթևեկությունը, այնպես էլ դիտարկումը, կրակավարումը ու կողմնորոշումը: Դրա հետ մեկտեղ լեռնային տեղանքն ապահովում է զորքերի շարժման և տեղաբաշխման քողարկվածությունը: Բացի այդ, լեռնային տեղանքն կարող է պաշտպանել զորքերին ատոմային պայթյունի ժամանակ առաջացած ճառագայթումից և թուլացնել հարվածային ալիքի ուժը: Անտառային տեղանքը երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որի կեսից ավելին ծածկված է անտառներով:

Ըստ ձևի անտառները լինում են միաշարք, որոնք չունեն մանրանտառ (թփուտներ), և բազմաշարք, որտեղ ծառերը տնկված են տարբեր ժամանակահատվածներում: Ըստ սաղարթի խտության և թավուության անտառները լինում են

- շատ խիտ,
- խիտ
- նոսր

Ըստ տեսակի դրանք լինում են՝

- լայնատերև,
- փշատերև
- խառը

Ճահճային տեղանքը երկրի մակերևույթի այնպիսի տեղամաս է, որտեղ կան չափից ավելի խոնավ հողեր: Ճահճային տեղանքն իր հերթին բաժանվում է ճահիճների և ճահճացված հողերի:

Ճահճային տեղանքի առանձնահատկություններից է բնակավայրերի բացակայությունը կամ թույլ բնակեցվածությունը, ճանապարհային վատ պայմանները, դժվար անցանելի և անանցանելի տեղամասերի առկայությունը: Դա խանգարում է զորքերի մարտական տեխնիկայի տեղաշարժին, ինչպես նաև մատակարարմանը և Էվոկուացիային (տարհանմանը): Անապատատափաստանային տեղանքը դա չոր անապատները, կիսանա-պատները և տափաստաններն են: Դրանք խիստ չորային տեղանք են՝ մայրցամաքային կլիմայով: Նրանց բնորոշ են լայնատարած, անտառազուրկ, քիչ բնակեցված տարածությունները, ճանապարհազրկությունը, ջրի պակասությունը և հողաբուսական յուրահատուկ պայմանները:

Բնահողի բնույթով առանձնացնում են տափաստանի հետևյալ տեսակները՝

- վազային
- կավային
- անտառային
- քարային
- աղուտային

Առավել լավ տարածում ունեն ավազային տափաստանները: Չնայած տափաստանի բաց տարածությունը հարմար է զորաշարժի համար, սակայն մարտական խնդիրների լուծումը բացասաբար է անդրադառնում բնական արգելքների բացակայությունը, որը դժվարեցնում է պաշտպանությունը և զորքերի քողարկումը: Իսկ տեղանքի ռեսուրսների՝ ջուր, վառելիք, սակավությունը դժվարեցնում է զորքերի մատակարարման գործը: Աչքի զարնող տեղանքի առարկաների բացակայությունը դժվարեցնում է կողմնորոշումը և նպատականշումը:

Եզրակացություն

Այսպիսով ամփոփելով աշխատանքի արդյունքները կարող են եզրակացնել, որ տեղանքը դա երկրի մակերևույթի որոշակի տեղամաս է, որի վրա անցկացվելու են մարտական գործողությունները: Տեղանքի տեղագրական տարրերի օգնությամբ որոշվում է տեղանքի մարտավարական հատկությունները, քանի որ դրանք ազդում են մարտի կազմակերպման, անցկացման, դիտարկման, կրակի վարման, կողմնորոշման, քողարկման, մարտում մարտական տեխնիկայի օգտագործման վրա: Տեղանքի ուսումնասիրման եղանակներից են՝

- տեղանքի հետախուզումը, սա հնարավորություն է տալիս ամենաճշգրիտ տվյալներ ձեռք բերել ռելիեֆի, տեղանքի առարկաների, անցանելիության և պաշտպանական հատկությունների, դիտարկման պայմանների, կրակի վարման, կողմնորոշման և քողարկման մասին:
- տեղանքի ուսումնասիրումը քարտեզի օգնությամբ, սա հնարավորություն է տալիս ժամանակին, արագ և մանրակրկիտ ուսումնասիրել տեղանքի խոշոր տեղամասերը և կատարել անհրաժեշտ չափումներ:
- տեղանքի լուսանկարումը օդալուսանկարներով, սրանք տալիս են ավելի թարմ և ստույգ տեղեկություններ տեղանքի մասին: Այսպիսով կարող ենք ասել որ ռազմական տեղագրությունը դպրոցում ուսուցանվող զինվորական առարկա է, որի բաղկացուցիչ մասերից են տեղանքի ուսումնասիրման մեթոդների մշակումը, կողմնորոշումը ռազմական գործողությունների նախապատրաստման և անցկացման նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ռազմական տեղագրություն (ՀՀ ՁՈԼ Գլխավոր շտաբ ՍԻՄ տպագրատուն Երևան 2008)
2. Նախնական զինվորական պատրաստություն դասագրքեր
3. Համացանց
4. Б.Е. Бызов,А.Н. Коволенко,А.Ф. Лахин “Военная топография”

